



# Α ΣΗΜΕΙΩΣΕΙΣ

ΑΝΤΙΦΩΝΙΑ

## ՃԵՂՔՈՒՄ

Հզոր քաղվածքներ աշխարհի ամենակրակոտ քարոզիչներից մեկի ուղերձներից

## ՈՌԴ ՓԱՐՍԼԻ

4.

Աստծո մասին նորոգված գիտությունը ճեղքում կբերի կյանքիդ մեջ, այն քեզ առաջ կմղի՝ ճեղքելով սատանայի բոլոր պատնեշները:

5.

Ես անօրեն մարդ չեմ, ով ապրում է օրինավոր աշխարհում... Ես օրինավոր մարդ եմ, ով ապրում է անօրեն աշխարհում:

6.

Ի՞նչ կասես, եթե սա լինի այն օրը, երբ կարիքդ կլրացվի Նրա հրաշքով:

7.

Այս պահին որոշում կայացրո՞ւ. կամ թույլ ես տալիս, որ քո լեռը հավատքդ շարժի կամ, ընդհակառակն, հավատքդ՝ լեռը շարժի:

8.

Ինչո՞ւ չես *առանձնանում*, քանի դեռ բոլորովին միայնակ չես մնացել:

9.

Այն, ինչ կատարվում է քո *մեջ*, ավելի զորեղ է, քան այն, ինչ որ կատարվում է քեզ հետ:

10.

Կարևորն այն չէ՝ ինչ երևում է արտաքինից, այլ այն՝ ինչ վառվում է մեր սրտերի սրբարանում:

11.

Ջուր ես փնտրում ուղիներ՝ այս աշխարհին մոտ լինելու և միաժամանակ փրկված լինելու համար: Ժամանակն է, որ մեղքը հեռացնենք մեր կյանքից:

12.

Սպասողական մթնոլորտը հրաշքների համար բերրի հող է:

13.

Ճեղքումը՝ Աստծո մասին նորոգված գիտության հանկարծակի ճայթյուն է, որն առաջ է մղում քեզ՝ ճեղքելով սատանայի հրաբորբոք պատնեշները:

14.

Երբ սատանան խոչընդոտում է Աստծո գործին, մեր մարմինը կրկին գլուխ է բարձրացնում, և անպտղության համար մեղադրում ենք մեր անաղոթք, անգոր, անկրակ քրիստոնեությանը: Մեզ հարկավոր է մեկ այլ՝ տեղատարափ, հորդահոս, պենտեկոստական գործություն:

15.

Աստծո կամքն է, որ մենք պատասխանատու լինենք՝ լինենք մեր խոսքի տերը. օրավարձի դիմաց տանք օրվա աշխատանքը:

16.

Մեղքը հաճույք է պատճառում... ընդամենը մի պահ: Սակայն դժոխքը հավիտենական է:

17.

Այս աշխարհի աղտից կմաքրվենք, եթե լվացվենք խոսքով և Հիսուսի արյունով: Թո՛ւյլ տուր, որ Հիսուսը հեռացնի աղտը քո կյանքից:

18.

Փոխարենը հարցնելու, թե լույսը խավարի հետ ինչ գործ ունի, ժամանակն է, որ հարցնես՝ «Սատանան մեզ հետ ի՞նչ ունի»:

19. Որպես լեզուներով խոսող, կրակոտ, Սուրբ Հոգով լցված, Ամենակարող Աստծո զավակներ՝ սատանայի աչքի, քիմքի և հոտոտելիքի համար ախորժելի չպետք է լինենք:

20. Եթե Աստծո մարդու միջոցով Աստծո ձայնը չենք լսում և չենք պատասխանում այդ ձայնին այնպես, ասես՝ Աստված անձամբ է մեզ հետ խոսում, ուրեմն երբեք ինքներս չենք կարող լսել Աստծո իրական ձայնը:

21.

Հասարակության վրա ազդեցություն ունենալու համար Աստված Քրիստոսի Մարմինը բարձրացնում է եկեղեցու նորմալ կարգավիճակից էլ ավելի բարձր: Մենք ապրում ենք մի հասարակության մեջ, որտեղ ճիշտն այնքան ժամանակ է սխալ համարվել, որ արդարությունը ոչ նորմալ երևույթ է համարվում:

22. Ծնողներ, սովորեցրե՛ք ձեր երեխաներին՝ հարգել իշխանություններին: Հեռուստաֆիլմերի այդ մշտական բռնության և բացասական միջավայրում թող որ նրանք տեսնեն, թե իշխանավորներն իրենց կյանքում ինչպես են կատարում Աստծո գործը:

23.

Մարդկության պատմության մեջ յուրաքանչյուր նոր ոսկեդարին նախորդել է մեկ կամ մի քանի անհատների նվիրվածությունն ու ճշմարիտ սերը: Նրանք ճանաչում էին իրենց Աստծուն և գիտեին, թե ուր են գնում:

24.

Մենք մեր կառույցը չենք հիմնել հավատքի, հույսի և Քրիստոսի հանդեպ սիրո հիմնաքարի վրա: Փոխարենը՝ այն հիմնել ենք վախի ու խուճապի վրա: Հույսներս դրել ենք քաղաքական գործիչների վրա, որոնք իրենց նենգ նպատակներն իրականացնելու համար՝ քնահաճորեն օգտագործում են անմիտ և անխորաթափանց մարդկանց զանգվածներին:

25.

Այս սերնդին հարկավոր են իմաստուն հայրեր, ովքեր կհասկանան, որ մարդկության «պրոբլեմների սիրտը» մարդու սրտի պրոբլեմն է, և մեր առաքելության նպատակը աստվածային կյանքը մարդկանց սրտերի մեջ տանելն է:

26.

Թե հայտնապես ի՞նչ արժեք ունենք Աստծո համար, կախված է նրանից, թե ինչպիսին ենք Աստծո առջև՝ ծածուկ վայրում:

27.

Աստծուց տրված կոչումը սուրբ է: Երբեք մի՛ ընդունիր Աստծո տված շնորհներն ու կարողություններն այնպես, ասես՝ այդպես էլ պետք է լիներ:

28.

Եթե մեր առաջխաղացման համար հայացքներս ուղղենք մարդուն, Աստված երբեք չի գործի, իսկ եթե հայացքներս սևեռենք Աստծուն, այս դեպքում մարդը այլընտրանք չունի:

29.

Շատ անգամ սպասում ենք, որ Աստված ինչ-որ բան կանի, սակայն Աստծո խոստումներն արդեն կատարված փաստեր են:

30.

Եթե Աստված Իր խոսքը գրում է մեր սրտերի մեջ, և մեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են, նշանակում է՝ Սրբություն սրբոցի աստվածային նույն ներկայությունն այժմ մեր մեջ է:

31.

Չկան այնպիսի հրեշտակներ, որ գնան՝ աշխարհում քարոզեն: Սուրբ Հոգին՝ անձամբ, չի քարոզում: Հիսուսը հենց մե՛զ ասաց, որ գնանք երկրի բոլոր ծայրերը և տարածենք Ավետարանը:

32.

Եթե պատասխան չենք ստանում, չի նշանակում, որ Աստված դադարել է պատասխանել մեր աղոթքներին, պարզապես՝ մենք մոռացել ենք խնդրել Նրան:

33.

Մենք նվաճում ենք թշնամու տարածքները՝ օգտագործելով Աստծո ամբողջ զինանոցը, սակայն մինչ մի քանիսը սուր են ճոճում և նետահարում են, մյուսները խաղալիք դանակներով խաղ են անում:

34.

Սուրբ Հոգու մկրտությունը քեզ համար կանի այն, ինչ հեռախոսային խցիկը՝ Քլարկ Քենթի համար: Այն քեզ բոլորովին ուրիշ մարդ կդարձնի:

35.

Նկատե՞լ ես, որ աշխարհն ավելի է լցված չարով, քան երբևէ: Սատանան կրակահերթ է բացել և հետզհետե սաստկացնում է իր գրոհները: Ինչո՞ւ, քանի որ լավ է գիտակցում, թե ինչ ժամանակներում ենք ապրում: Սատանայի ժամանակն ավարտվում է:

36.

Մեղքը մի ընդհանուր գիծ է, որ բոլորս ունենք, սակայն ոչ ոք չի ցանկանում դրա մասին խոսել:

37.

«Նոր դար» (New Age) շարժումը բոլորովին էլ նոր չէ: Այն աշխարհի ամենահին ստերիոգ է, նույն արևելյան միստիցիզմն է, ծպտված՝ արևմտյան հագուստով:

38.

Դեպի ազատություն տանող առաջին քայլը՝ խոստովանությունն է:

39.

Եթե չզնաս դեպի *ինչ-որ մի բան, ինչ-որ մի բանից* չես կարող հեռանալ: Երբ ապաշխարում ենք, *ինչ-որ մի բան* թողնում ենք ետևում և շարժվում ենք դեպի *մեկ այլ բան*:

40.

Ապաշխարությունը ինքնախարագանում չէ: Ոչինչ չպետք է անել՝ Աստծուն «դրդելու» համար, որ ների քեզ: Չպետք է լացել կամ ծնրադրել՝ ոտքերդ անզգայանալու չափ, անհրաժեշտ է միայն հնազանդվել Նրա խոսքին:

41.

Մենք այն սերունդն ենք, որը նախասահմանված է Աստծո փառքի *փորձնական* դրսևորման և հայտնության համար:

42.

Հիսուսը կառաջնորդի քեզ դեպի երկիր, սակայն այն տիրելու պարտականությունը քեզ վրա է:

43.

Սատանային չեն նյարդայնացնում այն եկեղեցիները, որոնց խամրած ցուցանակները փակցված են մի հյուղակի վրա, որտեղ վերջին տասնհինգ տարիների ընթացքում հավաքվել է ընդամենը տասներկու հոգի՝ ոչնչի մասին խոսելու համար:

44.

Գիշերային տեսիլքը երազ չէ: Երազ ես տեսնում, քանի որ չափից շատ պիցցա ես կերել, իսկ գիշերային տեսիլք ես տեսնում, քանի որ Աստված ցանկանում է ինչ-որ բան հաղորդել քո հոգուն:

45.

Ես չեմ ամաչում ասել, որ դեպի Աստված տանող միայն մեկ ճանապարհ կա, այն էլ՝ միայն Նրա Որդու արյան միջոցով: Ես չեմ ամաչում ասել, որ դժոխքում չոգ է, իսկ հավիտենությունը՝ երկար:

46.

Կային մարդիկ, որ ասում էին՝ խիստ անձնասիրություն կլինի, եթե Աստուծոց խնդրես ֆինանսների աշխարհում ցանած սերմերիդ հարյուրապատիկը. սակայն՝ ոչ. անձնասիրություն կլինի այն ժամանակ, երբ հարյուրապատիկը չակնկալես: Միայն քո կարիքների համար բավականաչափ ունենալը ուրիշներին օրհնություն չի բերի:

47.

Եթե այսօր ինչ-որ բանի կարիք ունես, որը երեկ չուներիր, ուրեմն այսօր սովորիր անել մի բան, որ կտարբերվի երեկվա արածիցդ:

48.

Աստծո մեծ մարդիկ չեն ընկնում, մենք ենք թողնում նրանց:

49.

Շնորհքը չենք ստանում՝ ինչ որ եկեղեցու անդամացուցակում գրանցվելով և ոչ էլ՝ եկեղեցի հաճախելով կամ առաջին շարքում նստելով: Քո շնորհքը իմ շնորհքից առավել չէ և ոչ էլ իմը՝ քոնից: Ղա Աստծո անհատույց պարզեն է:

50.

Սուրբ Աստվածը, տիեզերքի Արարիչը, անվճար մուտքի հնարավորություն է ընձեռում Իր ներկայության մեջ մտնելու համար: Առանց կարհանգույցի վարագույրը, որ կախված էր տաճարում, վերից վար պատռվեց Աստծո կողմից, և Նա ասաց. «Ես դուրս եմ գալիս, դուք ներս եք մտնում»:

51.

Աստծո զինանոցում խոնարհությունը բնավորության ձևավորման ամենամեծ քարն է. շնորհքը խոնարհեցնում է մեզ, բնավորությունն էլ շնորհքի արգասիքն է:



52.

Աստված շատ ավելի մեծ է, քան նրան հաճեցնելու մեր կարողությունը:

53.

Մեր ներսում ձևավորվում է մի բնավորություն, քանի որ գիտենք, թե ով է Աստված, ուստի և գիտենք, թե ով ենք մենք:

54.

Աստված մեզ համար Գողգոթայում թափեց Իր թանկագին արյունը, և զինը վճարվեց:

55.

Անմահությունը հենց այն է, ինչ բաժանում է քրիստոնեությունը աշխարհի մյուս կրոններից, քանի որ մենք հավիտյան ապրելու ենք Աստծո սրահներում, քայլելու ենք ոսկե փողոցներով, լսելու ենք հրեշտակների երգը, պարելու ենք փրկվածների երգի ներքո՝ հավիտենականության դարերի ընթացքում:

56.

Մեծ գնով ենք գնվել, և դա չի վճարել մարդը. Աստված մեզ համար Իր արյունն է թափել Գողգոթայում, և Նա միակն է, Ուն պետք է հաճեցնենք:

57.

Փրկությունը շնորհքով է: Փրկությունն ստանում ենք միմիայն Քրիստոսի խաչի արյան միջոցով:

58.

Երկար ժամանակ հավատացել ենք Աստծուն օրհնությունների կաթկթոցների համար, մինչդեռ Աստծո փառքի հեղեղը թափվում է Երկնքից և տարածվում մինչև երկրի ծայրերը. բաց մի՛ թող այն:

59.

Աստված ցանկանում է ցնցող ճեղքում բերել կյանքիդ մեջ, ինչն այնքան վաղուց էիր երազում, որ նույնիսկ մոռացել ես, թե որքան էիր փափագում:

60.

Շատ բան կարելի է սովորել՝ անցյալի անտեսված արժեքներին վերադառնալով: Փափք Աստծուն այն մարդկանց համար, ովքեր պարզապես խամաճիկներ չեն, այլ՝ մարդիկ են, որ բարձրանում են Աստծո սուրբ ամբիոն և աղաղակում մարգարեների նման:

61.

Եթե հանկարծ ստանայինք հազար դոլար, կհավատայինք զգացմունքներին: Ուրեմն ինչո՞ւ չլինենք զգացմունքային՝ Հիսուսի համար, Ում պատկանում է հազարավոր սարերի հոտը:

62.

Անկեղծ ասած, ես անտարբեր կլինեի, եթե դրախտի դռները պատրաստված լինեին փայտից կամ ճոճվեին կաշվե ծղխնիների վրա: Ես անտարբեր կլինեի, եթե փողոցներում ծնկաչափ ցեխ լիներ, կամ, եթե տները ստվարաթղթե հյուղակների պես լինեին: Որովհետև, երբ նայեմ այդ ցեխոտ փողոցի վերջը, այդ երկնային պողոտայի խորքերը, ես կտեսնեմ Նրան, Ով իմ տեղն է զբաղեցրել:

63.

Այն ժամանակ, երբ «անգոր» հոգեգալուստը դարձել է սովորական մի երևույթ և ոչ թե բացառություն, ավելի շատ լի այլասերությամբ, քան գորությամբ, ավելի շատ փոխզիջումներով, քան համոզմունքներով, մենք Սուրբ Հոգու կարիքն ունենք, Ով բարեհաճում է բնակվել մահկանացուներիս մեջ և մեզ ամբողջությամբ իրենով լցնել:

64.

Շատ մարդիկ կարդալով Աստվածաշնչի վերջին գիրքը՝ շփոթության են մատնվում, սակայն դրա համար պատճառ չկա: Իրականում, եթե աշխարհի պատմության մեջ կա մի սերունդ, որը պետք է հասկանա Հայտնության գիրքը, ուրեմն դա այս սերունդն է:

65.

Մենք ամեն օր մարգարեությունների իրականացման ականատեսն ենք: Երեկոյան լուրերը նայելու կարիք էլ չկա: Պարզապես կարդա՛ Աստվածաշունչը և մինչև լուրերը կհայտնեն՝ կիմանաս դրանց մասին:

66.

Աստծո համար քո ծախսորդությունների մռայլ տապանաքարը պարզապես բարեբեր հող է, որտեղից Նա հարություն կտա քո ազատությունը:

67.

Մենք ոչ միայն պետք է Աստծո մասին սովորենք, այլ նաև Աստծուց սովորենք և ուրիշներին էլ պատմենք Նրա մասին, որպեսզի ամբողջ մարդկությունը մոտենա Աստծուն:

68.

Դեռ կան մարդիկ, ովքեր հարցնում են. «Աստված նույնիսկ կարող է բժշկե՞լ»:

Կարո՞ղ է:

Երկրագունդը կարգեց, որ պտտվի և օվկիանոսներին հրամայեց՝ մի կաթիլ ջուր չթափել, բայց երբ մարմինդ տկար է, ավելի լավ չէ՞ դիմել Նրան, Ով ստեղծեց քեզ:

69.

Կան մարդիկ, ովքեր պնդում են, թե վերապրել են Սուրբ Հոգու մկրտությունը, ավելի շատ անկենդան են, քան՝ կենդանի, ավելի շատ «անջատված, քան՝ միացած», ավելի շատ սխալ, քան՝ ճիշտ: Ոմանց հոգին ավելի շատ պճնված է, քան՝ լցված: Մենք սովոր ենք «Նրա գործերի արտաքուստ զարդարանքին» և մոռացության ենք մատնել «Նրա զորության ներքին էությունը»:

70.

Ստացի՛ր Աստծուց խոսք և ամու՛ր բռնիր, նույնիսկ եթե ստիպված լինես պատերդ ծածկել նշումների դեղին թղթիկներով, թող որ Նրա հավատքի և բժշկության խոսքերը միշտ աչքերիդ առջև լինեն:

71.

Մեղքը խորամանկորեն է մոտենում քեզ: Այն նման է կծիկի հետ խաղացող կատվի: Մի պահ դա զվարճալի է: Բայց մինչ կհասկանաս, այն իր մահվան թելերով կշրջապատի քեզ, և կտեսնես, որ խճճվել ես հուսահատության մեջ:

72.

Ամուսնությունը երկու ոչ կատարյալ անձանց միություն է, որոնք, չնայած իրենց թերություններին, մեկը մյուսի հետ ուխտ են կապում՝ ձերբազատվել դրանցից:

73.

Գուցե առաջին ձայնը, որը երբևէ աղաղակել է «զորություն մարդկանց», Սուրբ Հոգու ձայնն է եղել, քանի որ Նա քաղաք մտավ հենց Աստծո շնչով:

74.

Եթե Աստված կարող է ավանակին օգտագործել, քե՛զ էլ կօգտագործի:

75.

Այն, ինչ մենք անվանում ենք ոչ ֆունկցիոնալ ընտանիք, Աստվածաշունչն անվանում է սերունդների անեծք:

76.

Օծությունը նման է օձանելիքի: Այն *պաշտպանում է* մեզ փտած և զազրահոտ մեղքից:

77.

Աշխարհին հարկավոր չէ մեկ այլ տաղանդավոր մարդ. այն փնտրում է անձնատուր և օծված մարդու:

78.

Մենք չենք ծառայում Աստծուն միայն նրա համար, որ ստեղծել է մեզ: Մենք ծառայում ենք Նրան, քանի որ մեզ տվեց իրավունք՝ ընտրելու, թե ում ենք ցանկանում ծառայել:

79.

Երբ քո հույսերն ու երազանքները թափում ես Հիսուսի ոտքերի առջև, պատասխան հատուցումը կարող է չափվել միայն հավիտենականության լույսի ներքո:

80.

Եկեղեցին մասնագիտացել է Տիրոջ գործի մեջ, սակայն մոռացել է գործի Տիրոջը: Այն, ինչ Աստված ուզում է, հաղորդակցությունն է, ոչ թե կրոնական ապրելակերպը:

81.

Օժտված մտքերը չեն կարող մրցել օժված մտքի հետ:

82.

Մենք պաշտում ենք մի Աստծու, Ում հաճելի են յուրօրինակը, գունագեղն ու գեղեցիկը: Նա փափագում է գեղեցկացնել, կամենում է, որ ամբոխի մեջ մենք աչքի ընկնենք և ցույց տանք Իր փառքը: Աստված օրհնում է մեզ՝ ի ցույց բոլորի:

83.

Մենք ասում ենք՝ չարչարված ենք, Աստված ասում է. «Դուք չա՛ր եք»:

Մենք ասում ենք՝ վիրավոր ենք, Աստված ասում է. «Մեղավոր եք»:

84.

Զմտահոգվես, եթե բժիշկը հայտնաբերի, որ անբուժելի հիվանդ ես: Փնտրի՛ր Աստծո երեսը օծության համար, և խավարդ շուտով կլինի կեսօրվա լուսապայծառ արևի պես:

85.

Երբ Աստված խոսեց, խավարն արձագանքեց. այն ստիպված եղավ ցրվել Նրա ձայնից:

86.

Չեմ կարծում, որ եկեղեցին կորցրել է *ախորժակը*, պարզապես այն փոխվել է: Մարդիկ մոռացել են, թե ինչպես պետք է սպասեն Տիրոջ ներկայությանը, մինչդեռ, Տերը պատրաստում և մատուցում է ճիշտ այն, ինչին ծարավ են նրանց սրտերը:

87.

Երբ երեխան ձեռքը մոտեցնում է տաք կաթսային, մայրը բղավում է՝ «ո՛չ» կամ հարվածում նրա թաթիկին, այդպիսով պաշտպանելով նրան: Երբ Աստված Իր զավակներին տվեց պատվիրանները, Նա նույն կերպ էր վարվում. Աստծո պատվիրանները մեր պաշտպանության համար են:

88.

Հիմնականում մարդիկ արթնություն են փափագում՝ հրաշքներ տեսնելու համար: Շատերը գալիս են հատուկ ծառայությունների՝ նշանների և հրաշքների ակնկալիքով: Իսկ քանի՞սն են գալիս իրենց հոգու Սիրելիին հանդիպելու և Նրա փառահեղության մի շողը ստանալու սպասումով:

89.

Դու չես գնում օտար աստվածների ետևից և չես ծառայում նրանց և ոչ մի պաշտամունքի արձանիկ չես կանգնեցրել քո տան բակում: Սակայն, ի՞նչ կասես այն մեկի մասին, որը նստած է քո տանը, գլխին ալեհավաքի նման պոզեր ունի, իսկ պոչն էլ նման է էլեկտրալարի:

90.

Հնազանդվելով՝ այնքան կբարգավաճես, որ ձեռք կմեկնես չունեցողին: Քեզ այլևս հարկավոր չի լինի «մաստեր քարդ», այլ միայն՝ «Մաստեր»:

91.

Երբ գիտակցես, որ Նրա խոսքը տրված է հենց քեզ համար, սիրով պարուրված՝ կնոռանաս, թե ով ես դու, որովհետև կհասկանաս, թե Ումն ես դու:

92.

Դու չգիտես, թե վաղվա համար սատանան քո դեմ ինչ դավեր է նյութել, ուստի, այսօր աղոթիր Սուրբ Հոգով:

93.

Աշխարհը լավ ստում է, իսկ մենք վատ ենք ասում ճշմարտությունը:

94.

Մենք մեր ուժը ստանում ենք պատերազմի ժամանակ: Մեր թեժ հակամարտությունները մեծ հաղթանակներ են բերում:

95.

Չար ժամանակների չարիքները հաղթահարելու համար դուք կարիք ունեք հավատքի, որը գիտի այդ ամենի մասին. այն աճում է և խորությամբ արմատներ գցում:

96.

Քո հաստատական չլինելու համար Աստծուն մի՛ մեղադրիր: Նա երբեք չի ձախողվել:

97.

Հոգևոր անձդ կերակրելու համար սերտի՛ր Աստծո խոսքը և մտապահի՛ր, թող այն արմատանա հոգուդ մեջ: Այն շոշափելի և զորավոր զենք է, որ Աստված տվել է մեր հոգևոր զինանոցի համար:

98.

Ես հավատում եմ, որ այն կառքերը, որոնք դեռ Եղիայի ժամանակներից չեն օգտագործվել, հիմա փայլեցվում և պատրաստվում են Երկնքում, որպեսզի դուրս բերվեն իրենց ծածկերի տակից: Հավատում եմ, որ Հիսուսը գալու է... շուտով:

99.

Կյանքի փորձությունների ընթացքում մի բան է՝ ճանաչել Աստծուն, սակայն մեկ այլ բան է, որ Աստված ասի. «Ես գիտեմ այս մարդուն, գիտեմ նրա սիրտը և գիտեմ, որ նա հավատարմորեն կձառայի ինձ»: Ես ուզում եմ լինել այդ մարդը:

100.

Սատանան նոր բան չի անում. ինչ որ անում է ուրիշների կյանքում, նույնպես և կանի քո կյանքում:

101.

Եթե ծանոթ ես սատանայի ռազմավարությանը, նա քեզ անակնկալի չի բերի: Երբ գիտակցում ես, որ հոգևոր պատերազմ է, խոցելի չես թշնամու համար:

102.

Ժամանակին մի իմաստուն ասել է. «Եթե սատանայի շուրթերը շարժվում են, ուրեմն ասա, որ ինքը ստում է»:

103.

Քրոնապատ, խիստ կազմակերպված, կանոնավորված և համակարգչայնացված մեր քրիստոնեությունը նույնքան արդյունավետ է, որքան լուցկու հատիկով սառցաբեկոր հալեցնելու փորձը:

104.

Որքան ժամանակ ես անցկացրել աղոթքի մեջ՝ ուրիշի ձեռքերը վեր բարձրացնելու համար: Մենք պետք է դադարենք՝ պահանջել ուրիշներից՝ անել շատ ավելին, քան ինքներս ենք անում:



105.

Մենք գոհել ենք արդար ու սուրբ ապրելաձևը՝ հանուն սանձարձակ և այլասերված խղճմտանքի: Այնքան ենք թաթախվել քաղաքական գործունեությունների մեջ, որ մոռացել ենք աստվածաշնչյան հիմունքները: Մենք գոհել ենք այն ճիշտը, ինչը դրվում է գոհասեղանին՝ հանուն քաղաքականության ճշտի:

106.

Հոգևոր գնդացիներով մարտադաշտ դուրս գալու փոխարեն, շատ քրիստոնյաներ «ջրցան» հրացան են վերցնում իրենց ձեռքը. խոսքը հոգևոր կյանքի ու մահվան մասին է: Սա խաղ չէ, ուզել-չուզելու հարց չէ. կյանքդ սրանից է կախված:

107.

Մինչ համասեռամուլները վերցնում են շղարշը իրենց երեսից՝ ամեն բան բացահայտ դարձնելով, քրիստոնյաները շղարշապատվում են, քանի որ չեն ցանկանում կարգի բերել իրենց «ներսի սենյակը»:

108.

Հավատքիդ կյանքում փորձությունների ժամանակ միգուցե դու կքվում ես դրանց ծանրության տակ, հիշի՛ր այն երեք հրեա պատանիներին և կրակի հնոցը. նրանք ո՛չ կքվեցին, ո՛չ էլ վառվեցին:

109.

Աստծո՝ հետ մեզ կապող միակ բանն աղոթքն է: Աստծո ծրագիրը հետևյալն է. Նա կամենում է, որ դու միշտ հասանելի լինես:

110.

Առանց աղոթքի՝ նման ես աչքերը կապած, անզեն զինվորի, ով չի տեսնում թշնամուն, և առանց կրակելու չի կարողանում ոչնչացնել նրան:

111.

Մենք այնքան ենք արժեզրկել հոգևոր օծության չափանիշները, որ այսօր ձգտում ենք հասնել մի բանի, ինչը մի ժամանակ մեր ոտքերի առջև էր:

112.

Գիտե՞ս՝ ինչ է ՎԱԽԸ. կեղծ փաստ, որը քողարկված է իրականության հագուստով:  
Հավատքով լցվիր, ոչ թե վախով:

113.

Աստծո Խոսքում գրված է, որ վերջին օրերում մի կտոր հացը ոսկու գին կունենա:  
Եթե նույնիսկ տնտեսությունները քայքայվեն և մի կտոր հացի համար մի պարկ ոսկի  
պահանջվի, միևնույն է, մենք կունենանք մեր հացի փուռը:

114.

Իմ Աստվածը, Ով իմ մեջ է, իմ առջևում և թիկունքում, կողքիս է, իմ ներքևում և  
վերևում՝ ավելի մեծ է, քան սատանան, որն աշխարհում է:

115.

Երբ գնում ենք այնտեղ, որտեղ չպետք է գնայինք, կտեսնենք այն, ինչ պետք չէր, որ  
տեսնեինք: Երբ գնում ենք այնտեղ, որտեղ չպետք է գնայինք, կանենք այն, ինչ  
պետք չէր, որ անեինք: Հիմնականում ինքններս ենք ստեղծում մեր խնդիրները:

116.

Հավատարիմ եղիր Աստծուն, մի՛ հանձնվիր, դառնությանը և բարկությանը տեղ մի՛  
տուր քո հոգում... և կյանքդ կդառնա կենդանի տաճար՝ փառաբանելու Նրա Սուրբ  
անունը:

117.

Գերիշխանության իմ խորը սահմանումն այս է. Նա Աստված է, իսկ դու՝ ոչ:

118.

Իրականում քո բնավորությունը այն չէ, թե ինչպես ես պատասխան տալիս լեռան  
զագաթից, այլ այն, թե ինչպիսի պատասխան գործողություններ ես ձեռնարկում  
կյանքի կատաղի փոթորիկների ու կրակի դեմ:

119.

Մեծ հայտնություններն առանց մեծ պատրաստվածության չեն գալիս:

120.

Ինչպես գետն է իր հունով հանդարտ հոսում, այնպես էլ Աստված՝ քո Հայրը, քեզ համար լավ ծրագիր է մշակել:

121.

Մենք ծառայում ենք մի Աստծու, Ով տալիս է՝ *Նախքան* կարիք ունենալը: Դու կարիք չունես սպասելու օրհնությունների, Նա արդեն քո գլուխն օծել է յուղով:

122.

Նախքան կստանաս այն, ինչ Աստծո ձեռքում է, պետք է բացես բռունցքդ և տաս Աստծուն՝ ինչ որ քո ձեռքում է:

123.

Աստված արդարություն է գործում, մենք՝ սրբություն: Նա գործ ունի մեր բնավորության հետ, իսկ մենք՝ մեր վարքի:

124.

Տիրոջ թագավորությունում Աստվածավարություն է, ոչ թե ժողովրդավարություն: Այնտեղ ընտրություններ չեն լինում, Հիսուսը մեր թագավորն է, մենք՝ նրա հավատարիմ ծառաները:

125.

Օրհնության երկու ամենամեծ արգելքներից են՝ համառությունը և մեծամտությունը: Ովքեր կարծում են, թե ունեն բոլոր հարցերի պատասխանները, Աստծո համար տեղ չեն թողնում:

126.

Ի՞նչ կխնդրեիր Աստուծոց, եթե իմանայիր, որ անհնար է՝ չստանաս: Ուրեմն, էլ ի՞նչն է քեզ ետ պահում:

127.

Ծոն պահելն Աստծո դեմ հացադուլ չէ, կամ էլ խղճահարություն առաջացնելու միջոց, որով Նրան կհամոզես ինչ-որ բան անել: Ընդհակառակը, դա անձի ուրացում է և հանգեցնում է քեզ այնպիսի կետի, որտեղ հոգիդ ընկնում է ճիշտ այն տեղը, որն Աստված քեզ համար նախատեսել է:

128.

Աստծուն չի հետաքրքրում քո հեկտարների քանակը: Աստված հետաքրքրված է քո պտղաբերությամբ: Բերքն ավելի կարևոր է, քան հեկտարները:

129.

Անցյալից խոսելը պետք է լինի ոչ թե սպիները ցուցադրելու, այլ՝ փորձառությանդ մասին համեստորեն պատմելու առիթ:

130.

Այն ամենը, ինչ որ ունենք, Աստծո ողորմածության արդյունքն է:

131.

Ես չեմ սկսել մեկ միլիոն դոլարանոց հավատքից: Ես այդքան հաշվել չգիտեի: Աստված վերցրեց ինձ այնտեղից, որտեղ որ էի, և տարավ այնտեղ, որտեղ ցանկանում էր, որ լինեի:

132.

Սրտով հավատալը և բերանով դավանելը այն երկու ծղխնիներն են, որոնցից կախված է առատության դուռը:

133.

Եթե ցանկանում ես վերապրել Աստծո առատությունը, գտի՛ր մի եկեղեցի, որտեղ սրերը ոչ միայն փայլեցվում են, այլ նաև դրանցից կաթում է թշնամու արյունը, քանի որ դրանք խոցել են դժոխքի դիվային ուժերի սրտերն ու ոգիները: Միացի՛ր նրանց, ովքեր պատերազմի թեժ ճակատում են:

134.

*Նույն Հիսուսը*, որ բժշկեց արնահոսող կնոջը, Սամարիայում բժշկեց տասը բորոտի, բացեց կույր Բարդուղիմեոսի աչքերը, *այսօր էլ ունի նույն զորությունը*: Նա այսօր էլ շարունակում է Իր բժշկող գործունեությունը:

135.

Այն դրանը, որ տալիս ես, ի սկզբանե Աստծուն էր պատկանում: Երբեմբ մենք պետք է փոխենք մեր մտածելակերպը՝ ասես տալիս ենք մարդուն: Ոչ: Մենք վերադարձնում ենք Աստծուն այն, ինչը Նրան է պատկանում:

136.

Աստված չի ասում՝ հաշվարկի՛ր. Նա ասում է՝ գնա՛: Նա Հետուն չասաց՝ հանի՛ր հաշվիչդ ու ֆիզիկայի գրքերը և հաշվի՛ր, թե ինչպիսի ուժգնություն և տատանումներ են հարկավոր Երիթովի պատերը քանդելու համար: Նա ասաց. «Քայլի՛ր և փչի՛ր փողերը»:

137.

Գրասենյակում ծառայող քահանային զոհաբերություն մատուցելը պետք է նույնքան բնական լինի, որքան եկեղեցում «ամեն» ասելը: Դա Աստծո կողմից հաստատված կարգ է:

138.

Հաճախ լավագույնը պահում ենք մեզ, իսկ Տիրոջը մատուցում այն, ինչն արժեք չի ներկայացնում մեզ համար: Հինգ տոկոսը տասը տոկոս չէ: Տո՛ւր Աստծուն քո լավագույնը և պատրաստվի՛ր տեսնել քո կյանքում ազատագրվող Նրա առատությունը:

139.

Երբ բոլոր քրիստոնյաները հնազանդության ճանապարհը բռնեն, երկրի ազգաբնակչությունը կփոխակերպվի: Աստված Իր սուրբ բնակավայրից կնայի և օրհնությունը օրհնության ետևից կուղարկի:

140.

Ուխտի տապանակն ավելին էր, քան փայտը, քարը կամ թանկարժեք քարերը: Այն օծված էր Աստծո կողմից: Ինչը սրբազործված և նվիրաբերված է Աստծուն, ավելի մեծ կարևորություն ունի, քան այն ֆիզիկական տարրերը, որ գտնվում են դրանցում:

141.

Տասանորդ տալիս՝ պարզապես մի թղթի կտոր չես տալիս: Դու Աստծուն ես վերադարձնում այն՝ որպես հավատքի և պաշտամունքի քայլ: Թո՛ւյլ տուր քեզ մի գաղտնիք ասել. երբ Աստված դիպչում է այդ թղթի փոքրիկ կտորին, Նա կարող է դա այնքան բազմապատկել, մինչև որ պարտամուրհակների սարն անհետանա:

142.

Դու գիտե՞ս, թե ինչու է Մեռյալ ծով կոչվում. նրա մեջ ջրերը միայն լցվում են և դուրս չեն հոսում: Այն մեռած է: Իմաստուն չես լինի, եթե լինես միայն վերցնող և ոչ թե նաև՝ տվող:

143.

Մեղքն աշխարհ մտավ, երբ մարդը երկարեց իր ձեռքը դեպի ծառի պտուղը: Մեղքի դեմ «դեղամիջոցը» ստեղծվեց մեկ այլ Մարդու միջոցով, Ով ինձ և քեզ համար խաչվեց «ծառափայտի» վրա:

144.

Քո իրական ճակատամարտը հոգևոր աշխարհում է, որտեղ Աստված քեզ իշխանություն է տվել՝ քանդելու երկրային բոլոր ամրոցները:

145.

Միակ մեղքը, որ Աստված չի ներում, չխոստովանած մեղքն է:

146.

Ես հոգնել եմ այնպիսի Եկեղեցուց, որն աշխարհիկ տեսք ունի, խոսում է աշխարհիկ լեզվով և գործում աշխարհիկ մեթոդներով: Ժամանակն է՝ հաստատվել Աստծո սրբության մեջ և ապրել այնտեղ, որտեղ չարը չի դիպչի մեզ:

147.

Կյանքը փոխանակման ընթացք է: Աստված մեզ չի լցնի ավելի, եթե չդատարկվենք:

148.

Հիշիր՝ Աստված մահը բնորոշում է՝ որպես բաժանում Իրենից, հետևաբար, կյանք՝ կնշանակի ապրել Նրա ներկայության մեջ:

149.

Փրկություն ստանալու միայն մեկ ճանապարհ կա. պետք է գիտակցես, որ մեղավոր ես և Փրկչի արյան կարիքն ունես:

150.

Հավատքը տեսնում է այն, ինչը հնարավոր չէ տեսնել, լսում է այն, ինչը հնարավոր չէ լսել: Հավատքը քեզ դարձնում է այնպիսին, ով հավատում է մի բանի, որին անհնար է հավատալ, տեսնում այն, ինչն անհնար է տեսնել, և լսում այն, ինչն անհնար է լսել:

151.

Հաշտությունը մի բան է, որ ատելությունը փոխակերպում է ընկերության: Սա մի աստվածային գործողություն է, որով անկարող մարդուն հնարավորություն է տրվում հաղորդակցվել Նրա հետ:

152.

Մենք ծառայում ենք գերիշխան Աստծուն, իսկ Նա վերահսկում է: Նա քեզ համար կես զին չի վճարել: Աստված վճարել է ԱՄԲՈՂԶ ԳԻՆԸ և կյանքիդ համար ծրագիր ու նպատակ ունի:

153.

Աստված գիտի, թե ով ես դու: Նա նախասահմանված աստվածային գործ ունի կյանքիդ համար: Նրա ցանկությունն է՝ քեզ գուբից տեղափոխել պալատ:

154.

Երբ հասկանաս, թե որն է Աստծո տեսիլքը կյանքիդ համար, այլևս չես բավարարվի սովորաբար եկեղեցի այցելելով: Դու չես բավարարվի ամբիոնի ետևում կանգնած «սառցե լուլայից», որն անդադար կրկնում է իր երեք կետերը և մի բանաստեղծություն: Դու կգոչես՝ որտե՞ղ են նշաններն ու հրաշքները: Որտե՞ղ են հայտնություններն ու դրսևորումները:

155.

Որտեղ էլ լինես՝ խորը հորում, ճանապարհին թե պալատում, դու նախասահմանված ես «նազլցելու» դեպի Ամենակարող Աստծո փառքը և օրհնությունները:

156.

Նա Աստված է, իսկ դու՝ ոչ: Այսօր շատ մարդիկ կան, որ փորձում են համոզել, որ դու Աստված ես, բայց վերջին անգամ ե՞րբ ես քայլել լողավազանի ջրի վրայով՝ ցուցադրելով քո ամենակարողությունը:

157.

Եթե հնարավոր լիներ Աստծուն բնորոշ բոլոր հատկանիշները միասին *եռացնել*, վերջում կմնար նրա աստվածային, ամեն ինչ պարունակող բաղադրիչը՝ սերը:





**ԱՖՈՐԻՋՄՆԵՐ**

**ՌՈԴ ՓԱՐՍԼԻ**